միկոնեան Կուրդիկ իշխանի գլուխը կտրած ղրկեց Սամարրա խալիֆին:

Կուրդիկ իշխանի արիւնոտ գլխի հետ ընկաւ ընդմիշտ եւ այն կարմիր դրօշը, որ ծածանում էր այնպէս պերճօրէն չորս յիշած դարերի պատմութեան վրայ: Կարմիր *դրօշը տանում էր դէպի քաղաքական ազատութիւն արեան ուղիներով: Բռնութեան դէմ բռնութիւն, ուժի դէմ ուժ, արեան փոխարէն արիւն — ահա դրօշի նշանաբանը: Նախնիք դարդարել են Վարդանին, Աւարայրի հերոսին,* Կարմիր *կոչումով: Նրա քաջարի սերունդը, որ նոյն վեհութեամբ փայլեց հետագայում իրաւունք ունի նոյն կոչման իր այնքան պանծալի եւ յառաջամարտիկ անուններով:*

Դժուար է գտնել որեւէ պատմութեան մէջ մի իշխանական տուն, որ դարերի ընթացքում մնար այնպէս հաւատարիմ իր տոհմական մըտայնութեան եւ աւանդներին: Ութերորդ դարի Մուշեղը յար եւ նման է չորրորդ դարի Մուշեղին: Արեան հետ ժառանգում էին ընտանիքի հերոսական ոգին: Անունները անգամ որ անցնում էին սերունդէ սերունդ յուշարարներ էին իրենց անցեալի: Մամիկոնեան տունը՝ հայ զինուորական կորովի մարմնացումն է, հայ ասպետական կարողութեան կենդանի պատկերը:

«Սրի երկիւղը անծանօթ է մեր տոհմին,— ասում է Վարդանը,— եւ մեզնից եւ ոչ մէկը եւ ոչ մի ժամանակ չէ քաշուել սրի ահից: Եւ թէ ինչպէս աւելի բարի ընկերի մասին ենք հոգացել քան մեր անձի, բոլորին յայտնի է»:

Ճշմարիտ նկարագիր Մամիկոնեան տան, որ տալիս է պատմիչը Վարդանի բերանով:

Հայ երկրի ու ժողովրդի արժանապատուութեան ուխտուած զինուորներն էին, որ անհաւասար կռիւների մէջ ուժասպառ եղան, հերոսներ, որ այրուեցին անձնուիրութեան հրդեհներում: Ի՞նչ է հերոսութիւնը, եթէ ոչ արհամարհանք մահուան յանուն մերձաւորի:

Մամիկոնեան կտրիճները իրօք մի մի հերոսներ էին, աննման ծաղիկներ, սփռուած մեր անցեալի ապառաժուտում, եւ պատուաբեր ամէն մի պատմութեան: Այդ չքնաղ ծաղիկները արեւակէզ ընկան:

Իրաւ է նոյն Վարդանի տրտունջը, ուղղուած նախարարներին.

«Ցանկ ձեր մղեալ է զմեզ ի նեղ եւ զձեր անձինս ի բաց ունելով՝ մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց եւ մահուց»:

Վշտերն ու մահերը սաստկացան մանաւանդ Վարդանից յետոյ, ինչպէս տեսանք, եւ Մամիկոնեան որեարը արենաքամ իջաւ պատմական դաշտից այն ժամանակ, երբ նորա երջանիկ մրցակիցը Բագրատունեաց տունը բարձրանում էր աջողութեան սանդուխով դէպի արքայական ապարանքը:

Այլ էր Բագրատունիների նկարագիրը, նրանց խառնուածքը եւ ընտրած ուղին: Ոչ պակաս քաջ եւ հայրենասէր Բագրատունի իշխանը միեւնոյն ժամանակ շրջանկատ է եւ գործնական: Չկարենալ զսպել կրքեր, զայրոյթը պահել իր ամանի մէջ թուլութիւն է: Բռնութեան դարեր էին, երբ կոպիտ ուժի հանդէպ հասարակական շահը յաճախ պահանջում էր լռել քան խօսիլ եւ տոկալ քան յուզուիլ: Անհատական խիզախութիւնը, հարկաւ, պատուիչ է, բայց շատ անգամ աղէտաբեր ընդհանրութեան: Պատասխանատու գործիչը ստիպուած է յաճախ հրաժարիլ շահատակութիւններից եւ կեանքի դառնութիւնները պահել իր ներսը, համբերութեան երկանաքարի տակ մանրել ոչնչացնել ծանր ապրումները առանց որեւէ արտաքին պայթոցի:

Սկզբում Բագրատունի Սմբատները Մամիկոնեանների նման սովոր էին ձեռքը պահել դաշոյնի վրայ, իսկ հետագայում Աշոտները ստիպուած էին ձեռքը դնել ճակատին: Ծանրախոհ եւ խորաթափանց՝ Բագրատունիք համակիր չէին ցնցումների, ընդունակ էին անգամ չարիք գործելու, աւելի մեծ չարիքի առաջն առնելու համար:

Եթէ Մամիկոնեանները հայ խաչելութեան եւ սրի չողչողուն քարերն են, Բագրատունիք հայ խոհականութեան քարէ սիւներն են: Գագիկ Թագաւորի արձանը, որ երեւան եկաւ Անիում, ներկայացնում է մեզ ասպետների թագակիր զաւակին ոչ նժոյգը սանձած, նիզակը ճօճելիս, սաղաւարտը գլխին, այլ որպէս ալեփառ ծերունի, նման աւելի վանահօր քան զինուորականի — երկար վերարկու, մէջքը պնդած գօտիով, մանրածալ փաթեթը գլխին, եւ պարզած բազուկների վրայ կանգուն հայրենի սրբարանը: